SPVM

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶՈՀԸ ԿԱՄ ՎԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Զանգահարեք անմիջապես 9-1-1:

Տրամադրեք հնարավորինս շատ համապատասխան տեղեկություններ. անձի հանդեպ ձեռնարկված գործողությունները, հարձակվողի արտաբերած խոսքը, ինչպես նաև ցանկացած այլ նշան կամ տեղեկություն՝ վկայող ատելության և հանցագործության բնույթի մասին:

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԻՋԱԴԵՊԻ ԶՈՀԸ ԿԱՄ ՎԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Ատելության միջադեպը հայտնելու համար կարող եք լրացնել հաշվետվություն SPVM կայքում այցելելով ստորև նշված ինտերնետային հասցեն:

**spvm.qc.ca/haineux**

Կարող եք նաև ներկայանալ ձեր տեղական ոստիկանական բաժանմունք:

**Եթե ցանկանում եք անանուն ձևով հայտնել ատելության միջադեպի կամ հանցագործության մասին, զանգահարեք Info-Crime Montréal 514 393-1133 հեռախոսահամարով**

# Ատելության միջադեպեր եւ հանցանքներ

Ճանաչել եւ հայտնել

spvm.qc.ca

# ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԻՋԱԴԵՊԵՐ ԵՒ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

Ճանաչել եւ հայտնել

Montréal

## Ի՞ՆՉ Է ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Այն քրեական հանցագործություն է. «Հանցագործությունը համարվում է ատելության վրա հիմնված, երբ դրա դրդապատճառը կամ կապակցվող դրդապատճառը հանդիսանում է ռասայական, ազգային կամ էթնիկական ծագումը, լեզվի, մաշկի գույնի, կրոնի, սեռի, տարիքի, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության կամ անձի դրսևորման կամ նմանատիպ ցանկացած այլ գործոնը[1]»:

**Ատելության հիմքով հանցագործությունների մի քանի օրինակներ.**

- Նացիստական խորհրդանիշների գրաֆիտիների պատկերում ։
- Բարձրաձայն սպառնալիքներ ուղղել մարդուն իր կրոնական հավատքի պատճառով:
- Ֆիզիկական հարձակում գործել իր մաշկի գույնի պատճառով:

## Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԻՋԱԴԵՊ

Ցանկացած՝ ՈՉ ՀԱՆՑԱԳՈՐԾ և ատելությամբ լի գործողություն, որը կարող է ազդել անձի կամ նույնականացվող անձանց խմբի անվտանգության զգացողության վրա՝ հաշվի առնելով այն համատեքստը, որում այն պայմանավորված է մասնավորապես ռասայով, ազգային կամ էթնիկական ծագման, լեզվի, մաշկի գույնի, կրոնի, սեռի, տարիքի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության կամ անձի ինքնադրսևորման կամ հաշմանդամության փաստով:
**Ատելության միջադեպերի մի քանի օրինակներ**

.

- Տարածել վիրավորական և վտանգավոր նյութեր՝ թիրախավորելով որևէ էթնիկ խումբ:
- Անձամբ վիրավորել կամ հասցեագրել վիրավորանքներ սոցիալական ցանցերում՝ պայմանավորված անձի սոցիալական կարգավիճակով:
- Անձի նկատմամբ ձեռնարկել անհարգալից գործողություններ՝ պայմանավորված իր սեռական կողմնորոշմամբ:

1 Սահմանումը վերցված է Հանցագործության Միասնական Հայտարարման (DUC) ծրագրի ուղեցույցից:

# Ես հայտնո՛ւմ եմ

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Զոհի համար՝**

- նվաստացում,
- ինքնագնահատականի, ինքնության և մարդկային արժանապատվության կորուստ,
- շատ հաճախ բռնության ավելի բարձր աստիճան, քան մեկ այլ տեսակի հանցագործության դեպքում,
- վախ ճանաչելի լինելուց և միջադեպը կրկնվելուց,
- մեկուսացում:

**Համայնքի համար՝**

- համայնքի տուժված անդամների անվտանգության խարխլված զգացողություն,
- համայնքի, որպես մեկ մարմնի ամբողջականության խարխլում,
- ատելությամբ լցված միջադեպերի ու հանցագործությունների վնասը մեր բազմամշակութային հասարակությանը:

## ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՀԱՅՏՆԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԴԵՊԻ ԿԱՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մոնրեալի ոստիկանական բաժանմունքում (SPVM) առաջնահերթությունը տրվում է նմանատիպ հանցագործություններին՝ անկախ իր ծանրությունից:

ՄՈԲ-ի համար առաջնահերթ կարևորություն է զգայունացնել բնակչությանը ատելության միջադեպերի և հանցանքների երևույթի նկատմամբ և խրախուսել զգոնությունը: